ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում
Վարկի համարը՝ P148836
Առաջադրանքի անվանում՝ Շահառուների գնահատում Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի և դրա Լրացուցիչ ֆինանսավորման Ծրագրի գործած ազդեցության վերաբերյալ
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ TBA-02
23 օգոստոսի, 2023թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությունը վարկ է ստացել Համաշխարհային Բանկից (ՀԲ) Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում ծրագրի նպատակով և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների իրականացման համար:
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը («Պատվիրատու») նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին («Խորհրդատուներ») ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Նախատեսված առաջադրանքի իրականացման համար կհատկացվեն ֆինանսական միջոցներ տեղական խորհրդատուներին՝ ստորև բերվող ծառայությունների մատուցման նպատակով:

Պայմանագրերի ստորագրման նախատեսվող ժամկետն է հոկտեմբեր, 2023թ.: Ծառայությունները կմատուցվեն 14 շաբաթվա ընթացքում:

Առաջադրանքի նպատակը. Հետազոտության հիմնական նպատակը շահառուների վրա Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի և դրա Լրացուցիչ ֆինանսավորման Ծրագրերի գործունեության ազդեցության գնահատումն է՝ ըստ շահառուների ընկալման, և ծրագրի արդյունքների շրջանակից մի քանի ցուցանիշներին համապատասխան անհրաժեշտ տեղեկատվություն ստանալը՝ կապված շահառուների՝ Ծրագրի հետևյալ երկու բաղադրիչների համար ենթակառուցվածքների և ծառայությունների որակի բավարարվածության հետ.

- Բաղադրիչ 1. Օժանդակություն սոցիալ-տնտեսական զարգացմանը և կարողությունների զարգացմանը տեղական մակարդակով:
- Բաղադրիչ 2. Օժանդակություն միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացումների նախաձեռնություններին:

Խորհրդատուի գործունեության հիմնական շրջանակներն են՝
<u>Հետազոտության յուրաքանչյուր փուլի համար</u> Խորհրդատուն պետք է հիմնադրամին ներկայացնի մշակված մեթոդաբանությունը և հարցազրույցների համար նախատեսված գործիքները (հարցաթերթեր, ֆոկուս-խմբերի և անհատական հարցազրույցների համար նախատեսված հարցաշարեր), ինչպես նաև Միջանկյալ և Վերջնական հաշվետվությունները: Վերոհիշյալ նյութերը պետք է ներկայացվեն հայերեն և անգլերեն լեզուներով, էլեկտրոնային և տպագիր տարբերակներով:

Մեթոդաբանության և գործիքների բաժինը պետք է մանրամասներ պարունակի շահառուների ընտրանքների, ֆոկուս-խմբերի և անհատական հարցազրույցների հարցաշարերի, շահառուների հարցման համար նախատեսված հարցաթերթի, դաշտային աշխատանքների անցկացման պլանի և այլնի վերաբերյալ:

Միջանկյալ հաշվետվությունը (3-ից 4 համակարգչային էջ ծավալով) ներկայացվում է դաշտային աշխատանքների մեկնարկից անմիջապես հետո (1-2 համայնքում գործիքակազմը փորձարկելուց հետո) և պետք է ընդգրկի նախնական արդյունքները, հարցազրույցների հարցաշարերի փոփոխությունները՝ եթե կլինեն, և այլ առաջարկներ հետազոտության և նրա ընթացակարգերի բարելավման վերաբերյալ:

Վերջնական հաշվետվության նախնական տարբերակում (մոտ 40համակարգչային էջ ծավալով՝ առանց Հավելվածների) պետք է ընդգրկվեն հետևյալ մասերը.

- Ամփոփագիր՝ (ներառյալ Ծրագրի բոլոր ցուցանիշների ցանկը՝ իրենց ելակետային և ընթացիկ արժեքներով, տարբերակված ըստ սեռերի),
- Հիմնական արդյունքների և եզրակացությունների ամփոփ ներկայացում,
- Ներածական մաս՝ Ծրագրի և շահառուների գնահատման հետազոտության նպատակների մասին տեղեկատվությամբ,
- Մեթոդաբանություն (քանակական և որակական գնահատման մեթոդները, տվյալների հավաքումը, ընտրանքը),
- Հետազոտության արդյունքները, ԾԳՀ-ի ցուցանիշներն իրենց նախնական և ընթացիկ արժեքներով, տարբերակված ըստ սեռերի (այս բաժինը կարող է պարունակել աղյուսակներ, դիագրամներ և այլն),
- Եզրակացություններ և հանձնարարականներ, ինչպես նաև
- Հավելվածներ, որոնց թվում՝
  - Ընտրված ծրագրերի ցանկ,
  - Քանակական հետազոտություն գործիք՝ շահառուների հարցման համար կազմված հարցաթերթիկ,
  - Որակական հետազոտություն գործիքներ՝ ֆոկուս-խմբերի, անհատական խորացված հարցազրույցների համար նախատեսված հարցաշարեր, խորացված հարցազրույցներում ընդգրկվածների նկարագրություն
  - Տվյալներ շահառուների մասին ըստ սեռի, կրթական մակարդակի, զբաղվածության և ծրագրի տեսակի,
  - Էական նշանակություն ունեցող այլ տեղեկատվություն:

Վերջնական հաշվետվության նախնական տարբերակի վերաբերյալ հիմնադրամի դիտողությունները և մեկնաբանությունները կներկայացվեն խորհրդատուին 7 աշխատանքային օրվա ընթացքում: Դրանք պետք է ներառվեն Վերջնական հաշվետվության մեջ: Վերջնական հաշվետվությունը պետք է ներկայացվի հիմնադրամ՝ խորհրդատուին հիմնադրամի դիտողությունները և մեկնաբանությունները ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում: Վերջնական հաշվետվության երկու տպագիր օրինակը պետք է ստորագրվի և կնքվի:

Ակնկալվում է, որ հիմնադրամին են տրվելու նաև հարցազրույցների աղագրությունների էլեկտրոնային տարբերակները և հարցաթերթիկների տվյալների բազան:

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, ինչպես նաև վերը նշված որակավորման չափանիշներով սահմանված տեղեկություններ), որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: **Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունը պետք չի ներկայացնել տվյալ փուլում:**

Ընտրության չափանիշներն են.

- *Խորհրդատուի փորձառություն սոցիոլոգիական հետազոտությունների իրականացման բնագավառում (առնվազն 5 հետազոտություններ),*
- *Քանակական և որակական հետազոտությունների նախագծման և իրականացման փորձառություն,*
- *Գնահատման հետազոտությունների պլանավորման, տվյալների հավաքման, վերլուծությունների կատարման և հաշվետվությունների կազմման փորձառություն,*
- *Հայաստանի շրջաններում աշխատելու փորձառություն:*

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի՝ **“Գնումների Կանոնակարգեր Ներդրումային Ծրագրերի Ֆինանսավորման (IPF) փոխառուների համար, Հուլիս 2016, փոփոխված Նոյեմբեր 2017թ, Օգոստոս 2018թ” («Գնումների կանոնակարգեր»), բաժին III, պարբերություններ 3.14, 3.16 և 3.17-ին վրա,** որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի **«Գնումների կանոնակարգեր»-ի** “Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն” ընթացակարգի համաձայն:

Շահագրգիռ խորհրդատուները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժ. 09:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով, ոչ ուշ քան **2023թ. սեպտեմբերի 6-ը, ժամը 17:00-ը:**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Գնումների բաժին
Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 407 սենյակ
Էլ-փոստ՝ procurement@atdf.am
Հեռ: (+374 60) 501 560 +510